Վահան Թոթովենց

Օտար է չսիրողը

Չեմ գիտեր, թե ինչու կդողան այն ամեն շարժուն և անշարժ, անզգա իրերը, որոնց կհարիմ ոևէ կերպով. բոլորն ալ կթրթռան երկյուղով մը և կսարսռան չարաճճի տղու մը ձեռքին մեջ բռնած թռչունի մը պես, իբր թե բոլորին ալ վիրավորած ըլլայի, բոլորին սրտին սուր մը տեղավորած ըլլայի:

Մանուշակը, որ համբույրիս տակ կուլա, և փրցուցած ցողունես արյունը կվազե կաթիլ առ կաթիլ: Քարերն անգամ իմ հպումիս տակ կդողան և կշարժին:

Աչքերս չեմ կրնար տեղ մը գամել, նայվածքներս առանց
աչքերես դուրս ելլելու կմարին ճրագի մը պես հոգիիս անդունդին մեջ լույսի անդունդը…

Բայց ինչո՞ւ դուրսի աշխարհը զիս գիշեր մը կկարծե, և ամեն ինչ խույս կուտա ինձմե:

Բան մը կփնտրեմ, կփնտրեմ և չեմ կարող գտնել: Չեմ հիշեր, թե ինչ կորսնցուցած եմ, բայց կփնտրեմ և չեմ կարող գտնել: Իբր թե այս աշխարհեն չըլլայի՝ ամեն մարդ ինձ խիստ կնայի, և ես, հոգնած երազելեն՝ դեպի մենությունները կվազեմ:

Կզգամ, թե պարապություն մը կա իմ հոգիիս խորությանը մեջ, զոր ոչ ձայները կրնան լեցնել, և ոչ ալ աշխարհի բոլոր թրթռումները կրնան գրավել այդ թափուր միջոցը:

Օտար եմ ես այս աշխարհին:

Օ՜, սարսուռը վարդերուն, որոնց լացեն կիյուսվի իմ երիտասարդ ողբս: Օ՜, արյունը կակաչին, որ իմ մենավոր աղոթքս կհալածե իր կյանքի անապատին մեջ:

Եվ ցայգին մեջ չնիրհող առվակը կմրմնջե ինձ. «Սիրե՛, սիրե՛»: